

սաւ թէ քրիստոնեաներու մէջ մեծ ու փոքր չկայ, ծառայ և տէր չկայ, հրեայ և հեթանոս չկայ, այլ մարդու և կին մարդու մէջ տարբերութիւն չկայ, այլ ամէնքը հաստատար են իրարու, ամէնքը մէկ են Յիսուս Քրիստոսի Աւետարանով:

Մենք մեր կատարած ուսումնասիրութեան իբրեւ կնիք պիտի բռնենք թէ Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան մէջ, ինչպէս նաեւ մեզի ժամանակակից Պօթոհնիկոյ և Ազգային Սահմանադրութեամբ կառավարուած Հայց. եկեղեցւոյ մէջ՝ եկեղեցւոյ և Պետական բաժանման խնդիր չի կար և չի կրնար ըլլալ:

Բայց հիմա, խորհրդային կարգերու հաստատութեամբ երեսնոն եկած է պետութեան քանդիչ միջամտութիւնը եկեղեցւոյ գործերուն: Ուրեմն աւելի շիտակ պիտի ըլլար ըսել, Պետութիւնը պիտի չի որ միջամտէ եկեղեցւոյ գործերուն, ուսկի կերպով, ուղղակի կամ անուղղակի, յայտնի կամ չտեսնուող, այլ պէտք է պահէ բացարձակ չէզոքութիւն, և եթէ ուզէ՞ք անտարբերութիւն: Կամ չըջնելով Հայց. եկեղեցւոյ վերաբերութեամբ անիմաստ կերպով կիրարկուած բանաձեւը, պիտի ըսէինք որ պիտի է Պետութիւնը բաժնէ եկեղեցիին ճիշդ այնպէս ինչպէս եղած է Ամերիկայի մէջ:

ՎԵՐՋ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԼԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

(Հ. Վ. Հացունիի Երկրորդ յօդուածին տարիս)

Պ.

ՍԱՆԱՏՐՈՒԿ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐ

Հ. Վ. Հացունին Սանատրուկի և որդւոյն անունները նոյնացնելով արտաքին պատմութեան մէջ Սեւերոսի մը հետ, Բրդ դարու մարդիկ կը հռչակէ զանոնք:

Ստոյգ է որ մեր ազգային պատմութեան թերիները, շփոթները և հակասութիւնները անուրանալի են, մանաւանդ երբ ատենք բազդատուին արտաքին պատմադիրներու հետ — թէ և տարբեր խնդիր է թէ այդ արտաքին պատմադիրներ ո՞րչափ ճիշտ և անաչառ եղած են Հայոց մասին —: Գաթրճեան, Գարագաշ զնահատելի և մեծ աշխատանք կատարեցին այդ արտաքին ազդիւրները ուսումնասիրելու և ատենցմէ մեր ազգային պատմութեան նիւթերը քաղելու գործին մէջ: Իսկ Դոկա. Հ. Յ. Ասատուրեան, Հ. Վ. Հացունիի միաբանակիցը, սիրուն հատորիկով մը (Քաղաքական Վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի և Հռոմիայ, 190 էն Ն. Ք. մինչև 428. Յ. Ք. Տպ. Վենետիկ 1912) տուաւ մեզի նոր համառօտ պատմութիւն մը այդ շրջանի համար:

Արդ՝ նայելով Գարագաշի և Ասատուրեանի զբաժնեւորուն Սանատրուկի վրայ, իրաւունք ունինք յայտարարելու թէ Հ. Վ. Հացունին ըսածները Սանատրուկին «հոգովայնի Սեւերոսի մը» հետ «կապուած» կամ նոյնացուած ըլլալուն նկատմամբ, վիճելի են բոլորովին:

Ըստ Գարագաշի՝ Սանատրուկը պիտի ըլլայ «եզրայն փարսմանայ, Միւրդաս Վիր, զոր կացոյց Տիրեր ի վերայ Հայոց 135—45), և այս յայտնի է մանաւանդ յաղիոգորմ վախճանէ նորա, կնոջն և որդւոյ» (Քնն. Պսմ. Գ. 273, 275):

Իսկ Ասատուրեան, որ Հ. Վ. Հացունիի չափ քննադատ մըն է, կ'ըսէ.

— Տրդատի (= Ա.) անմիջական յաջորդի մասին շատ պայծառ վկայութիւններ չունինք: Կ'ուզեմ փորձել ՍԱՆԱՏՐԱՆԻ (75 էն 110 ի մէջ) թագաւորը այս ժամանակիս մէջ զնել, որ Հայոց արքայներու ցանկին մէջ ընդհանրապէս վեր ու վար կը փոխադրուի:

Այս անձի մասին առաջին տեղեկութիւնը կը գտնենք Արիանեսի քով. «Սանատուրու, արքայ Հայոց, չափակեցեալ մարմին մ'ունէր և մտքով մեծ էր ամէն բանի մէջ, մանաւանդ պատերազմական զործոց մէջ: Նա եղաւ հաւատարիմ պահապան արդարութեան և իր կենցաղավարութեան մէջ ոչ մէկ լաւ Յոյնէ կամ Հռոմայեցիէ վար կը մնար»:

Յետոյ, Կասրու Դրոնի հատակաւորի մը մէջ կը կարդանք. «Երբ Վաղարշ, որդի Սանատուրու, Աեւրոսի բանակին գէտ ճակատած էր և խառնուրդն սկսելէն առաջ զինադար խնդրած և ընդունած էր (կոչար Ագրիանոս) անոր խրկեց պատգամաւորներ և Հայաստանի մէկ մասը շնորհեց անոր խաղաղութեան համար»:

Քիչ մը վերջ պիտի տեսնենք որ հոս յիշատակուած Վաղարշը 116—140/3 ժամանակ Հայոց թագաւորն է: Ուրեմն իր հայրը Սանատուրու կը պէտք ենք փնտռել Տրդատ Ա.ի (66—75...) և Աշխատարայ (110) մէջ (ՏԵՍ վերե յիշուած զործը, էջ 194—195):

Ահաւասիկ զգուշաւոր, խոհական մեթոտ մը քննադատութեան, որ կը քանդէ խաբխուռ տունը, բայց նորը կը շինէ անոր տեղ, և ո՛չ թէ աւերակ մը կը թողու հոն:

Մենք, հակառակ Հ. Վ. Հացունիի կարծիքներուն, անգամ մըն ալ պիտի չեւտենք թէ հին ժամանակներու պատմական մթութիւններու մէջ, որոնք կը տրին ո՛չ միայն եկեղեցիներու ծագման շուրջ, այլ նաեւ հին ազգերու ծագման բարդ խնդիրներուն մէջ, ապահովագոյն մեթոտն է հաւատարիմ ըլլալ ազգային աւանդութիւններուն և աշխատել զոնոնք բացատրելու, եթէ հնար է, պատմական լոյսերով:

Սանատուրուի և Սանդուխտի պատմութիւնը, Թաղէոսի առաքելութեան վերաբերութեամբ, ապացուցուած է արդէն որ յետին ժամանակի վկայարանական գործեր են, ապացուցուած է նաեւ որ Խորենացին շատ սխալ պատմադրեր է Արդարի գրոյցը, իր ձեռքին տակ դառնում սխալ և թերի աղբիւրներու հետեանքով անշուշտ. ասոնք բոլոր սակայն, աւանդութեան կամ պատմութեան բունին, էութեան չեն վնասեր. ասոնց վկայարանական կամ պատմագրական ձեւին հետ եղած խնդիրներ են ատոնք, և մենք համոձայն ենք քննադատութեան արդիւնքներուն՝ երբ անոնք սխալը կ'ուղղեն, թերին կը լրացնեն և զրական բանաբաղութեանց աղբիւրները մէկիկ մէկիկ մատնանիլ կ'ընեն, և ո՛չ թէ ամէն բան քարուքանդ կ'ընեն:

Սակայն Հ. Վ. Հացունին չ'ուզեր հասկընալ կամ չի կրնար հասկընալ ասիկա, և ատոր համար այս անգամ ալ ուղղակի կը յարձակի բուն աւանդութեան վրայ և կը համարձակի ապշեցուցիչ յայտարարութեամբ (!) մը վճսել թէ աւանդութիւններն ալ կը չինուին. վասն զի Սիոն քանդոց գիտել տուած էր որ Աւանդութիւնը չի շինուիր. իսկ Հ. Վ. Հացունին կը վճռէ սորովհետեւ աւանդութիւնն ալ կը շինուի («Բզմկ. 26»):

Այս մասին խօսքը պիտի տանք Արդարին գրոյցը քննադատող և Խորենացիին գրութեան ժամանակը ճշգրտ հայադէտ Ա. Կարբիէրին, որ պատասխանէ մեր յարգելի ընդգրկմախօսին:

Ա. Կարբիէր, Լաբուրնայի բնագրին հայերէն թարգմանիչին կողմէ կրած փոփոխումները մատնանիլ ընելէ ետքը, կ'ըսէ.

— «Թարգմանիչն ո՛վ որ ալ ըլլայ, Հայաստան տեսարանող Սուրբ Թադեոսի մը գրոյցը սեղծելու նպատակ չունի. ապա թէ ոչ այնպիսի որոշ բառեր չէր գործածեր: Բայց անստակոյս ունի իւր առջեւը նախապէս ցոյց տրուած ունեցող գրոյց մը, որ կ'ըսէր քի Թադեոս ի Հայաստան տեսարանը խորոզած՝ եւ մարշիւրական մանուսք մեռած ըլլայ, և հարկ էր յամենայն դէպս իւր թարգմանած գրքին բաժնենքն՝ իւր չորս կողմէ տիրող ընդհանուր կարծեաց հետ միաբանել: Վկայարանական մատենագրութիւնն այսպիսի փոփոխութեանց շատ

մ'օրինակներ կ'ընծայեա՞ն (Արգարու Զրոյցը, և այլն, զրեց Ա. Կարբիէր, թրգմ. Հ. Գարբ. Վ. Մէնէպիւեան. Ազգ. Մանգրն. ԻԲ. էջ 33):

Այո՛, Աւանդութիւնը չի շինուիր: Մեր գործը առասպելներու հետ չէ, աւանդութիւններու հետ է, մա՛նաւանդ նուիրական աւանդութիւններու հետ, որոնց վրայ ազգ մը ամբողջ կը դուրդուրայ, կը պահէ: Այո՛, այս աւանդութիւններու մէջ սխալներ, նոյն իսկ առասպելներ ալ կրնան սպրդիլ, բայց աւանդութիւնը աւանդութիւն է և կը մնայ:

Հայ ազգը պէտք չունէր անգոյ թագաւոր մը ստեղծել Սանատրուկ անունով և ազգիկ մըն ալ ենթադրել անոր Սանդուխտ անունով, որպէսզի թագէտս Առաքեալի մը քարոզութեան ապացոյցը չլինէր: Ասանկ բան չի կրնար ընդունիլ ողջմիտ քննադատութիւնը: Եթէ կեղծիք է, շինծու է թագէտս Առաքեալ, Սանատրուկ, Սանդուխտ, ինչպէ՛ս համար տարբեր անուններ պիտի չստեղծէին, այլ անպատճառ թագէտս Առաքեալ, Սանատրուկ արքայ և Սանդուխտ կոչս: Այս հարցումը ուրիշ պատասխան չունի, բայց եթէ սա՛ որ ատենք պատմական անձեր են, որոնց դոյութիւնը և գործերը զբո՛րախտաբար հայ ժողովուրդին մէջ աւանդութեամբ միայն պահուած են. և, հակառակ Հ. Վ. Հաջունիի հրամանին, այդ անգիր ժողովուրդը յունարէնով ալ չէր կրնար գրել իր ազգային ու եկեղեցական պատմութիւնը. վասն զի կը տեսնենք կոր ահա, որ նոյն իսկ իրենց բնիկ լեզուով, ոսկի հայերէնով, չեն կրցած գրել իրենց պատմական ժամանակներուն պատմութիւնը, և ինչպէս մեր նախորդ յօդուածին մէջ ըսած էինք, մինչև իսկ հայերէն գիրերու գիւտին պատմութիւնը:

Դժբախտաբար, Հ. Վ. Հաջունին այսպիսի գորաւոր առարկութիւններն ու դիտողութիւնները չլսելու կը զարնէ: Բայց հակառակ իր ճիշդութեան, իրողութիւնը այն է որ մեր պաշտելի նախնիք ամէն բան ըրած են, բայց ատենց շնորհքով մէկ պատմութիւնը չեն կրցած գրել:

Ինչևիցէ, մենք չենք ուզեր այլևս ընդերկար ծանրանալ այս նիւթերուն վրայ, և միայն պիտի դիտել տանք Հ. Վ. Հաջունիին, որ եթէ թագէտս Առաքեալի և Սանդուխտ կոչսին պատմութիւնը կեղծիք մը եղած է Հայաստանի մէջ կամ շինծու աւանդութիւն մը, այն ատեն իր քննադատութեան հետեանքին ամենէն յառաջ ինքն պէտք է հաւանել անկեղծօրէն. այսինքն՝ պիտի հաւանի և պիտի ընդունի որ հայ կաթողիկ եկեղեցին, որ ըստ նախնեաց կարգադրութեան, կը տօնէ թագէտս Առաքեալին և Սանդուխտ կոչսին միացեալ տօնը, ի յիշատակ Հայաստանի առաջին լուսաւորութեան, մինչև հիմայ կեղծիք մը տօնած է: Եւ ըստ Հ. Վ. Հաջունիի քննադատութեան հետեանքին, եթէ մեր ազգային եկեղեցական պատմութիւնէն պիտի ջնջուի այդ շինծու աւանդութիւնը, այն ատեն հարկ կ'ըլլայ ջնջել այդ անունները և անոնց տօները ամէնէն յառաջ Ս. Ղազարու Տպարանէն հրատարակուած Տօնացոյցներու և Օրացոյցներու մէջէն, ինչ որ անկարելի է, քանի որ բոլոր վիճակական դպրոցը այդ աւանդութեան պահպանը եղած է Հաջունիէն յառաջ և վերջը:

